ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

N 101 - Ա **16 հունիսի 2016 թ.**

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունվարի 26-ի N 346-Ն որոշումը

կարգադրում եմ՝

1. ՀՀ Գեղարքունիքի մարզի հանրակրթական և առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների անշարժ գույքը Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության տնօրինությանը հանձնելու աշխատանքները կազմակերպելու նպատակով ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով՝

Բուդումյան Խաչատուր – մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետի տեղակալ, հանձնաժողովի նախագահ

Դվոյան Սևակ – մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի տեղակալ

Սաֆարյան Համբարձում – մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի վարիչ

Ղազարյան Գոռ – մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ- տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսական բաժնի վարիչ

Բիձյան Հակոբջան – մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության բնակարանային և ենթակառուցվածքների գործունեության բաժնի վարիչ

2. Հանձնաժողովին՝

1) մինչև 2016 թվականի հուլիսի 15-ը ՀՀ Գեղարքունիքի մարզի պետական ոչ առևտրային կազմակերպությունների հանձման ենթակա անշարժ գույքի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնել ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչության տնօրինություն.

2) մինչև 2016 թվականի սեպտեմբերի 1-ն ավարտել ՀՀ Գեղարքունիքի մարզի պետական ոչ առևտրային կազմակերպությունների անշարժ գույքի հանձման աշխատանքների կատարումը:

3. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել մարզպետի տեղակալ Անդրանիկ Հակոբյանին:

4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ ՌԱՖԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ